ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222)2-03-65, էլ. հասցե abovyan.city@rambler.ru

16 ապրիլի 2013թ. N Ե-509

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

Ձեզ է ուղարկվում Աբովյանի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 15-ի N 05 նիստի որոշումները /կցվում են/:

**Քաղաքապետ** **Կ. Գուլոյան**

*Կատ. Աբովյանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար*
*Սուսաննա Զաքարյան*
*0222-2-07-06,060-53-64-38*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՔԱՂԱՔ ԱԲՈՎՅԱՆ

# ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2013 թվականի N 26-Ա

## 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 05 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածների, Աբովյանի քաղաքային համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է՝*

1. Հաստատել 2013 թվականի ապրիլի 15-ի N 05 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյանի քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին.

2) Աբովյանի քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրին գումար հատկացնելու մասին.

3) Աբովյանի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 14-ի N 4-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -9

ՉԱՏՅԱՆ ՄԱՐԳԻՍ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՂԱՄ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԻՄԱԿ
ՓԱՆՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄԵԼԻՔՄԵԹՅԱՆ ԳՈՌ

Դեմ -0
Ձեռնպահ -0

Քաղաքապետ Կ. Գուլոյան

2013թ. ապրիլի 15
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՔԱՂԱՔ ԱԲՈՎՅԱՆ

# ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2013 թվականի N 27-Ն

## ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, Աբովյանի քաղաքային համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է* ՝ ի գիտություն ընդունել 2013 թվականի առաջին եռամսյակի Աբովյանի քաղաքային համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին քաղաքապետի հաղորդումները (կցվում է) :

Կողմ -9

ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՂԱՄ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԻՄԱԿ
ՓԱՆՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳՈՌ

Դեմ -0
Ձեռնպահ -0

Քաղաքապետ Կ. Գուլոյան

2013թ. ապրիլի 15
ք. Աբովյան

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

2013 թվականի Արովյանի քաղաքային համայնքի բյուջեն առաջին եռամսյակում եկամտային մասով նախատեսված 227631.2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 244299.6 հազ. դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 107.2 %-ով, իսկ տարեկան ծրագրի նկատմամբ այն կատարվել է 24.3 %-ով: (տես հատված 1):

*Ըստ հարկատեսակների կատարողականը ունի հետևյալ տեսքը .*

Հաշվետու ժամանակաշրջանում գույքային հարկեր անշարժ գույքի գծով նախատեսված 41000.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 45507.5 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 111.0 %-ով, որի արդյունքում բյուջեն համալրվել է 4507.5 հազար դրամով, իսկ տարեկան պլանի նկատմամբ այն կատարվել է 25.5 %-ով:

Տեղական տուրքերի գծով նախատեսված 8400.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 12592.6 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 149.9 %-ով, որի արդյունքում բյուջեն համալրվել է 4192.6 հազար դրամով, իսկ տարեկան պլանի նկատմամբ այն կատարվել է 52.7 %-ով:

Պետական տուրքերի գծով նախատեսված 4600,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 4926.4 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 107.1 %-ով, որի արդյունքում բյուջեն համալրվել է 326.4 հազար դրամով, իսկ տարեկան պլանի նկատմամբ այն կատարվել է 18.6 %-ով:

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսված 135841.8 հազար դրամը հատկացվել է, իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումը՝ սուբվենցիան նախատեսված 927,0 հազար դրամի դիմաց հատկացվել է 878.0 հազար դրամ:

Գույքի վարձակալությունից եկամուտների գծով նախաատեսված 9500,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 9860.0 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 103.8 %-ով, որի արդյունքում բյուջեն համալրվել է 360.0 հազար դրամով, իսկ տարեկան պլանի նկատմամբ այն կատարվել է 29,4 %-ով:

Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներից նախատեսված 662.4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 530.9 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 80.1 %-ով, որի արդյունքում բյուջե պակաս է մուտք եղել 131.5 հազար դրամ, իսկ տարեկան պլանի նկատմամբ այն կատարվել է 20,0 %-ով:

Վարչական գանձումներից ստացվող միջոցներից նախատեսված 23200.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 26535.4 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 114.4 %-ով, որի արդյունքում բյուջեն համալրվել է 3335.4 հազար դրամով, իսկ տարեկան պլանի նկատմամբ այն կատարվել է 21.1 %-ով:

Տույժերից և տուգանքներից ստացվող մուտքերը նախատեսված 600,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 87.0 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 14.5 %-ով, որի արդյունքում բյուջեն պակաս է մուտքագրվել 513.0 հազար դրամ, իսկ տարեկան պլանի նկատմամբ այն կատարվել է 2.2 %-ով:

Այլ եկամուտների գծով նախատեսված 2900.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 7540.1 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 260.0 %-ով, որի արդյունքում բյուջեն համալրվել է լրացուցիչ 4640.1 հազար դրամով:

***Ծախսերի գծով կատարողականը ունի հետևյալ տեսքը .***

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջեի ծախսային մասով նախատեսած 383084.8 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 219103.8 հազար դրամ, այն կատարվել է 57.2 % -ով (տես հատված 2, 6 ):

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատվածին հատկացվել է 46452.8 հազար դրամ , որը կազմում է հատկացված ծախսերի 23.6 %-ը:

Տնտեսական հարաբերությունների գծով հատկացվել է 36883.6 հազար դրամ, որը կազմում է հատկացված ծախսերի 18.7 %-ը: Հողի և գույքի օտարումը բյուջեում արտացոլվում է տնտեսական հարաբերություններ մասում, բացասական նշանով, որը հաշվետու ժամանակաշրջանում կազմում է 21565.8 հազար դրամ:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար հատկացվել է 44912.0 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 22.8%-ը:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության համար հատկացվել է 9662.8 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 4.9 %-ը:

Հանգիստ, մշակույթ և կրոն խմբի պահպանման համար հատկացվել է 10360.0 հազար դրամ, կազմելով ծախսերի 5.2 %-ը:

Նախադպրոցական հիմնարկների պահպանման և վերանորոգման համար հատկացվել է 66307.3 հազար դրամ,որը կազմում է ամբողջ ծախսերի 33.6 %-ը, իսկ արտադպրոցական հիմնարկների պահպանման և վերանորոգման համար հատկացվել է 35160.9 հազար դրամ,որը կազմում է ամբողջ ծախսերի 17.8 %-ը:

Սոցիալական պաշտպանության խմբի համար նախատեսված 4000,0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

Հաշվետու ժամանակաշրջանում ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը հատկացվել է 201520.5 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 90.3 %-ը : Ընթացիկ ծախսերի

17.6 %-ը ուղղվել է բյուջետային հիմնարկների աշխատավարձի վճարմանը, նախատեսված 40525.0 հազար դրամի դիմաց ծախս է կատարվել 35480.2 հազար դրամ կատարվելով 87.6 %-ով: 6.6 %-ը կամ 13380.2 հազար դրամը ուղղվել է ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսերին: Հաշվետու տարում համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպություններին համայնքային բյուջեից տրվել է 152566.8 հազար դրամ սուբսիդիա, որը կազմում է ընդհանուր ծախսերի 75.7 %-ը :

Հաշվետու տարում համայնքային բյուջեի ծախսերի 9.7 %-ը կամ 17583.2 հազար դրամը ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Միջոցների հիմնական մասը՝ 50000.0 հազար դրամը կամ ֆոնդային ծախսերի 2.8 %-ը տրամադրվել է կապիտալ նորոգման աշխատանքներին,կատարվելով 5.1 %-ով, 3286.4 հազար դրամը կամ ծախսերի 18.7 %-ը՝ շենքերի և շինությունների կառուցման աշխատանքներին, հաշվետու ժամանակաշրջանի պլանի նկատմամբ կատարվելով 27.4 %-ով, 2436.0 հազար դրամը կամ ծախսերի 13.9 %-ը հատկացվել է այդ աշխատանքների նախագծահետազոտական փաստաթղթերի կազմմանը: Կապիտալ ծախսերի 13.9 %-ը կամ 6860.8 հազար դրամը ծախսվել է տրանսպորտային և վարչական սարքավորումներ ձեռք բերելու համար (տես հատված 3 ):

Աբովյան համայնքի բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) կազմել է 17063.6 հազար դրամ, որից 3659.6 հազար դրամը՝ վարչական բյուջեում, իսկ 13404.0 հազար դրամը՝ ֆոնդային բյուջեում (տես հատված 4): Պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորմանն է ուղղվել տարեսկզբի ազատ մնացորդից 13772.0 հազար դրամ (տես հատված 5):

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ժ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01/01/2013թ. - 31/03/2013թ. ժամանակահատվածի համար)

(հազար դրամով)

| Տողի N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում վարչական մաս | ֆոնդային և մաս | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում վարչական մաս | ֆոնդային և մաս | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝ | | 964217.0 | 964217.0 | 0.0 | 1004217.0 | 1004217.0 | 0.0 | 244299.6 | 244299.6 | 0.0 |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160), այդ թվում՝ | 7100 | 228612.0 | 228612.0 | x | 228912.0 | 228912.0 | x | 63026.5 | 63026.5 | x |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112), այդ թվում՝ | 7131 | 178500.0 | 178500.0 | x | 178500.0 | 178500.0 | x | 45507.5 | 45507.5 | x |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 61000.0 | 61000.0 | x | 61000.0 | 61000.0 | x | 15090.4 | 15090.4 | x |
| 1111Ա | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար (ֆիզիկական անձանցից) | | 33000.0 | 33000.0 | x | 33000.0 | 33000.0 | x | 5527.8 | 5527.8 | x |
| 1111Բ | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար (իրավաբանական անձանցից) | | 28000.0 | 28000.0 | x | 28000.0 | 28000.0 | x | 9562.6 | 9562.6 | x |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 20000.0 | 20000.0 | x | 20000.0 | 20000.0 | x | 4372.5 | 4372.5 | x |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝ | 7136 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 97500.0 | 97500.0 | x | 97500.0 | 97500.0 | x | 26044.5 | 26044.5 | x |
| 1121Ա | Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից) | | 11000.0 | 11000.0 | x | 11000.0 | 11000.0 | x | 2732.2 | 2732.2 | x |
| 1121Բ | Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից) | | 86500.0 | 86500.0 | x | 86500.0 | 86500.0 | x | 23312.4 | 23312.4 | x |
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝ | 7145 | 23612.0 | 23612.0 | x | 23912.0 | 23912.0 | x | 12592.6 | 12592.6 | x |
| 1131 | Տեղական տուրքեր, (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144 + տող 1145), այդ թվում՝ | 71452 | 23612.0 | 23612.0 | x | 23912.0 | 23912.0 | x | 12592.6 | 12592.6 | x |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1132 | ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող 1334), որից՝ | | 3100.0 | 3100.0 | x | 3100.0 | 3100.0 | x | 295.0 | 295.0 | x |
| 1133 | աա) Հիմնական շինությունների համար | | 3000.0 | 3000.0 | x | 3000.0 | 3000.0 | x | 295.0 | 295.0 | x |
| 1133Ա | -մինչև 300 քառ. մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար | | 3000.0 | 3000.0 | x | 3000.0 | 3000.0 | x | 295.0 | 295.0 | x |
| 1134 | աբ) Ոչ հիմնական շինությունների համար | | 100.0 | 100.0 | x | 100.0 | 100.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1134Ա | -մինչև 20 քառ. մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1134Բ | - 20 և ավելի քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | | 100.0 | 100.0 | x | 100.0 | 100.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1135 | բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար | | 100.0 | 100.0 | x | 100.0 | 100.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1136 | գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | | 100.0 | 100.0 | x | 100.0 | 100.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1137 | դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | | 5512.0 | 5512.0 | x | 5512.0 | 5512.0 | x | 4715.0 | 4715.0 | x |
| 1137Ա | - ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | | 2756.0 | 2756.0 | x | 2756.0 | 2756.0 | x | 4715.0 | 4715.0 | x |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1137Բ | - ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | | 2756.0 | 2756.0 | x | 2756.0 | 2756.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1138 | ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար | | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1139 | զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | | 1800.0 | 1800.0 | x | 1800.0 | 1800.0 | x | 950.0 | 950.0 | x |
| 1140 | է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար | | 500.0 | 500.0 | x | 500.0 | 500.0 | x | 350.0 | 350.0 | x |
| 1140Բ | -հանրային սնունդի և զվարճանքի օբյեկտների համար | | 500.0 | 500.0 | x | 500.0 | 500.0 | x | 350.0 | 350.0 | x |
| 1141 | ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար | | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1142 | թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | | 10000.0 | 10000.0 | x | 10000.0 | 10000.0 | x | 4751.6 | 4751.6 | x |
| 1143 | ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար | | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 11.0 | 11.0 | x |
| 1144 | ի) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար | | 1400.0 | 1400.0 | x | 1400.0 | 1400.0 | x | 660.0 | 660.0 | x |
| 1145 | լ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար | | 500.0 | 500.0 | x | 500.0 | 500.0 | x | 500.0 | 500.0 | x |
| 1146 | Ավտոկայանատեղի համար | | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1147 | խ) Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն | | 600.0 | 600.0 | x | 600.0 | 600.0 | x | 360.0 | 360.0 | x |
| 1148 | Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար | | 0.0 | 0.0 | x | 300.0 | 300.0 | x | 0.0 | 0.0 | x |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1148Ա | - հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար | | 0.0 | 0.0 | x | 288.0 | 288.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1148Բ | - ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար | | 0.0 | 0.0 | x | 12.0 | 12.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1149 | - համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար | | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1150 | 1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝ | 7146 | 26500.0 | 26500.0 | x | 26500.0 | 26500.0 | x | 4926.4 | 4926.4 | x |
| 1151 | Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1152 + տող 1153), այդ թվում՝ | | 26500.0 | 26500.0 | x | 26500.0 | 26500.0 | x | 4926.4 | 4926.4 | x |
| 1152 | ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար | | 7500.0 | 7500.0 | x | 7500.0 | 7500.0 | x | 1871.0 | 1871.0 | x |
| 1153 | բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար | | 19000.0 | 19000.0 | x | 19000.0 | 19000.0 | x | 3055.4 | 3055.4 | x |
| 1160 | 1.5 Այլ հարկային եկամուտներ, (տող 1161 + տող 1165 ), այդ թվում՝ | 7161 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝ | 7300 | 547758.3 | 547758.3 | 0.0 | 547758.3 | 547758.3 | 0.0 | 136719.8 | 136719.8 | 0.0 |
| 1210 | 2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝ | 7311 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1220 | 2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝ | 7312 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |
| 1230 | 2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, | 7321 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1240 | 2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, | 7322 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |